ԱՍԽՀ ՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՑԵԽՊՐՈՊ

ԲԵԹՄԵՆԸ—
ԱԴՐԲԵՋԱՆԻ ԲԱՄԲԱԿԱՅԻՆ ԴԱՇՏԵՐԻՆ

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

ԱԶԵՐՆԵՇՐ
ԳՑՈՒՂՏՆՏԲԱԺԻՆ
ԲԱԳՈՒ—1934

631.3
Ձ-35

631.3
Ֆ-35

Թարգմանեց՝ ՍԱՐԳԻՍ ԴԱՍՊԱՐՅԱՆ
Հայ. խմբագրեց՝ Լ. Դ.
Սրբագրիչ յեվ տեխ. խմբագիր՝ Ա. ԱՐԽԱՆ

Baş Mətbuat Mydirligi Myvəkkilligi № 4620. Sifariş № 714. Tiraž 1000.
Istehsalata verilmiş 4/VI-34. Capa imzalanmış 20/V-34. Cap listi 3/4.
Kaqız formatı 82×110. Azərnəşr mətbəəsində basıldı. 26-lar adına
„Kitab Sarajı". Bakı, Əli Bajramov kucəsi.

04 AUG 2010
ՀԱՅԿ. ԳԱՍԱՆԱՏՈՒՆԱՅԻՆ ՄԱՍ
Ա.Ա.Ա. № 522 2
633.41(47.94)

ՔԵԹՄԵՆՆ — ԱԴՐԲԵՋԱՆԻ ԲԱՄԲԱԿԱՅԻՆ ԴԱՇՏԵՐԻՆ

Ադրբեջանի կառավարությունը վորոշել է հենց այս տարի մեր կոլխոզային տնտեսության մեջ արմատացնել 100 հազար քեթմեն։

Քեթմենը մի խոշոր յերկաթե թորխ է, վոր լայնորեն գործադրվում է Միջին Ասիայի բոլոր բամբակային հանրապետություններում։ Դա միջին ասիական բամբակագործի անփոխարինելի գործիքն է, վոր նա գործ է ածում դաշտային բազմազան՝ վոռոգման, կառուցողական և ճանապարհային աշխատանքների ժամանակ։ Քեթմենով բամբակի համար ածուներ են շինվում ջոյացեղ կուլտուրայի դեպքում, ձեռքաթորխում է կատարվում (քաղհան և բուկը տալ) բամբակենու վեգերացիոն մշակման ժամանակ փորվում է և ավելվում են ջրելու առուները, շինվում են ջուրը ներս առնելու և բաց թողնելու անցքեր և ջրատար ակոսներ դաշտերը ջրելելու համար արմատախիլ են արվում թփերը և կոճղները, պլանավորվում են դաշտերը և այլն և այլն։

Ինչո՞ւ քեթմենի արմատացմանը բացառիկ նշանակություն է տրվում յեվ ինչո՞ւ անհրաժեշտ է դուրս մղել նեռկայումս Ադրբեջանում գործածվող թորխը։

Ամենից առաջ պետք է ասել, վոր մեր թորխերը, յեթե նույնիսկ չհամեմատենք քեթմենի հետ, ինքնբստիքյան շատ թերություններ ունեն։ Մինչև այժմ բամբակի մշակման համար մենք չունենք սահմանված թորխերի ստանդարտ ձևեր։ Ադրբեջան թորխեր են մուծվել զանազան ձևերի, տարբեր քաշի, տարբեր կառուցվածքի. մեծ քանակությամբ թորխներ են մուծվել վատորակ նյութից պատրաստած, որինակ փափուկ յերկաթից ու ընդհան-

30.08.25
16388

բայիս անպետք են և իրենց քաշով, և ձևով բամբակի վրա աշխատելու համար։ Թօրխերի կոթերը քիչ բացառությամբ տարբեր յերկարություն ունեն, ծուռ ու մուռ են՝ անհարմար են աշխատանքի համար։ Այդ բոլոր թերությունները ազդում են թօրխով կատարվող աշխատանքի վորակի վրա առաջին հերթին ձեռքով կատարած քաղհանի վորակի վրա։

Բայց, յեթե մինչևիսկ վերացնենք վերը մատնանշված բոլոր թերությունները, այնուամենայնիվ լավ շինված սովորական ձևի թօրխը հետ կմնա միջին-ասիական քեթմենից՝ շնորհիվ իր ավելի թեթև քաշի։

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС Библиотека
ՀՍՍՌ—Арм.ССР
43506.67

Վեգետացիայի ժամանակ բամբակի մշակման հիմնական խընդիրը մոլախոտերի դեմ պայքարելն է։ Իսկ մոլախոտերի հաջող ոչնչացումը հնարավոր է միայն համեմատաբար խոր մշակման դեպքում՝ վոչ պակաս 7 սանտիմետր խորության։

Մեր թեթև թօրխը թույլ է խորանում հողի մեջ, դժվար է նրան խրել հողի մեջ։ Դրա հետևանքով մոլախոտերի արմատները կտրվում են միմիայն վերի մասից (հողի յերեսին շատ մոտիկ՝, ուստի և մոլախոտերը, վոր բազմանում են վերարմատներով և արմատներից, արագորեն աճում են։ Հազիվ քաղհանը կատարում և դաշտերը արտաքուստ մոլախոտերից մաքրում են, մեկ էլ տեսար դաշտը ծածկվեց բույսերով, ելի նորից պիտի քաղհանել՝ բամբակի բերքը փրկելու համար։ Ուստի զարմանալի չէ, վոր մեզ մոտ ստիպված ենք այդքան շատ քաղհաններ անել՝ հին դաշտերում 4-ից վոչ պակաս, իսկ յերբեմն էլ վեց և մինչևիսկ ավելի՝ ամառային մշակման միայն մի յերեք ամսվա ընթացքում։

Բոլորովին այլ աշխատանքի արդյունք է տալիս քեթմենը։ Յեթե մեր թօրխը կշռում է 400 մինչև 600 գրամ (միջին հաշվով 1—1,5 գրվ.), ապա մեզ մոտ ընդունված ձևի քեթմենները կըշռում են 2 կիլոգրամ։ Զգալիորեն ծանր լինելով թօրխից՝ հողի մեջ խրելիս քեթմենն ավելի քիչ ջանք է պահանջում։ Հենց քեթմենի քաշը նպաստում է այն բանին, վոր խփելիս նա ավելի խոր է և մտնում, քան թե թօրխը։ Թօրխով աշխատելիս մկանային ավելի ջանք պիտի թափել, վորպեսզի թօրխը քեթմենի չափ խորը կոխենք հողի մեջ։

Քեթմենն առանձնապես արժեքավոր է այն դաշտերի մշակման համար, վորտեղ հանդիպում են վերարմատային և կոճղարմատային շատ մոլախոտեր՝ խոզերուկ, հումայ, պատատուկ, մացի տեղ և այլն։

Քեթմենն՝ առաջին,—հեշտությամբ կտրում է հաստ վերարմատները. սովորական թօրխով դա անել ավելի դժվար է։ Յերկրորդ՝ քեթմենի օգնությամբ ավելի հեշտ է պոկել վերարմատները բավականին մեծ խորությունից, վորտեղ նրանք գտնվում են։ Օրինակ, հումայի պես վտանգավոր մոլախոտի դեմ պայքարելու համար անպայման հարկավոր է օգտվել քեթմեններով, քանի վոր սովորական թօրխերով շատ դժվար է այն կտրել և վերարմատը գետնի յերեսը հանել ու հետո այրել։

Այսպիսով՝ քեթմենն ամենալավ ձեռքի գործիքն է մոլախոտերի դեմ պայքարելու համար։ Զուր չէ, որ ուզբեկները, որոնք վաղուց հայտնի են որպես առաջնակարգ որինակելի բամբակագործ, ընդունել են քեթմեն որպես բամբակենու վեգետացիոն մշակման գործիք և կարողացել են բազմաղարյան պրակտիկայի ընթացքում՝ մշակել քեթմենի ամենախելացի ձևը։

Բոլոր սածները հասկանալի են դարձնում, թե ինչու քեթմենի արմատացման գործին անհրաժեշտ է բացառիկ ուշադրություն և հոգացողություն ցույց տալ։ Մեր հիմնական խնդիրն է հաղթահարել բամբակային դաշտերի անագին աղտոտվածությունը և բարձրացնել ձեռքի քաղհանի՝ որպես մոլախոտերի վոչնչացման միջոցի, արդյունավետությունը։ Թեթև թորխով գետնի յերեսը փորփրելով՝ այդ նպատակին մենք չենք հասնում։ Վերարմատավոր և արմատները տարածող մոլախոտերը միայն վերից են կտրվում թորխերով և նորից արագությամբ բուսնում են։ Իսկ քեթմենը փոխարինելով թորխին ուժեղ գործիք է հանդիսանում այդ տեսակի մոլախոտերի դեմ մղվող պայքարում։ Մի-յերկու տարուց հետո, յեթե մենք միաժամանակ այլ միջոցներ ել գործադրենք՝ որ մեր դաշտերը մոլախոտերի սերմեր չմտնեն և նրանց դեմ ակտիվ պայքար մղենք, մենք զգալիորեն կմաքրենք մեր դաշտերը բամբակենու այդ վոխերիմ թշնամիներից, որոնք իջեցնում են նրա բերքատվությունը և բամբակագործներից պահանջում են մեծ աշխատանք ու միջոցներ գործադրել։

Այդպիսով՝ քեթմենի արմատացումը պետք է համարել ԱՍԿՀ բամբակենու բերքատվությունը բարձրացնելու միջոցներից մեկը, մի միջոցառում, որն ուղղակի բղխում է յերկրորդ 5-ամյակի խնդիրներից, որոնք մեզնից պահանջում են աշխատանքի որակի բարձրացում, բամբակենու մշակման բոլոր պրոցեսներում ագրոտեխնիկայի բարելավում։

Քեթմենը համարելով որպես ձեռքի ամենալավ գործիք մոլախոտերի դեմ պայքարելու և հողը փխրացնելու համար բամբակենու վեգետացիոն մշակման ժամանակ, մենք դրա հետ միասին չպիտի մոռանանք, որ բամբակի միջշարքային մշակումը պիտի կատարվի տրակտորներով և ձիու կուլտիվատորներով։

Քեթմենի կիրառումը պիտի հասվի առնի կուլտիվացիան. քեթմենը չպիտի փոխարինեցնի կուլտիվատորին։

Քեթմենի հիմնական դերն է՝ գործել բամբակի շարքերում բույսերի բների միջև և շարքերի կողքերում։

Միայն մի դեպքում՝ բամբակի առաջին քաղհանի ժամանակ մշակումն ամբողջովին կատարվում է քեթմենով։ Դա այն ժամանակ, յերբ բամբակային դաշտը կոպիտ է մշակված և ծածկված է կոշտերով։ Միջշարքերով կուլտիվատորն անցնելիս այդ կոշտե-

րը կարող են դես ու դեն շպրտվել և բամբակի մատղաշ, քընքուշ բույսերը վնասել։

Համենայն դեպս, մտցնելով քեթմենի գործածությունը չի կարելի թուլացնել պայքարը բամբակի վեգետացիոն մշակման մեքենայացման համար։ Մշակման մեքենայացումը բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը, պակասեցնում է յուրաքանչյուր հեկտարի վրա գործադրվող բանուժը, ուստի և հնարավորություն է տալիս ավելի ժամանակին կատարել բամբակենու քաղհանը և թորխումը։

Վերևում մենք արդեն ասացինք, որ քեթմենը հանդիսանում է „ունիվերսալ“ գործիք, այսինքն այնպիսի գործիք, որով կարելի յե կատարել հողային բազմազան աշխատանքներ։

Քեթմենը շատ հարմար է և դաշտերը ջրելիս, տալիս է ավելի արտադրողական աշխատանք, քան թե թորխը։ Նա նմանապես լիովին փոխարինում է թիակին՝ առուները խորացնելիս և մաքրելիս, ջուրը բաց թողնող անցքերը բանալիս և փակելիս, առուների մեջ արգելաթմբեր շինելիս և այլն։

Դաշտը թփերից արմատահան անելու ժամանակ նույնպես ա-

վելի լավ է քեթմենը գործադրել, քանի վոր քեթմենի ուժեղ հարվածով հեշտ է արմատները տակից կտրել, քան թե վոտքով թիակը սեղմելով։

Բամբակի քաղահանի և ջրելու ժամանակ սովորելով տիրապետել քեթմենին՝ կոլտնտեսականները և խորհտնտեսությունների բանվորներն անկասկած կսկսեն քեթմենը գործածել նաև ուրիշ ամեն տեսակի հողային աշխատանքներում՝ փոսեր փորելիս, դաշտերը պլանավորելիս, ճանապարհներ շինելիս, աղյուսի համար կավ պատրաստելիս և այլն և այլն։

Խոսելով քեթմենն Ադրբեջանի բամբակային տնտեսության մեջ արմատացնելու մասին՝ անհրաժեշտ եր ամենից առաջ կանգ առնել այդ գործիքի այն տիպերի վրա, վորոնք ամենից ավելի համապատասխանում են մեր պայմաններին։ Միջին Ասիայում քեթմենի շատ ձևերը կան, վոր մշակվել են տարբեր շրջանների պրակտիկայով և հարմարացվել զանազան նպատակների։

Հողժողկոմատում վորոշվել է ամենից առաջ հրաժարվել ծանրը տիպի քեթմեններից և կլոր ձևի քեթմեններից։ Քանի, վոր քեթմենը մեր պայմաններում հիմնականում պետք է գործադրվի վեգետացիոն մշակման համար, ընդունվեց յերեք տեսակ, մշակված մեր պայմանների համաձայն և ամենամեծ քաշը 2 կիլոգրամ (միջին Ասիայի մի քանի շրջաններում գործ են ածվում մինչև 3,7 կիլոգրամանոց քեթմեն), այսինքն՝

Տեսակ	№ 1	քաշը 2	կիլոգրամ,	բերնի	լայնքը 22	սանտ.
«	№ 2	1,8	»	»	» 19	»
«	№ 3	1,5	»	»	» 17	»

Բոլոր յերեք տեսակները կարող են գործ ածվել բոլոր աշխատանքներում՝ իսկ ջրողների համար հանձնարարվում է №1 քեթմենը։ №2 և № 3 քեթմենն առաջին հերթին նշանակվում է բամբակենու քաղահանի համար։ Թեթև քաղը հնարավորություն կտա այդ գործիքով զինելու վոչ միայն հասուն տղամարդկանց, այլ և կանանց, ծերերին ու դեռահասներին։

Ցուրաքանչյուր քեթմեն ունի ստանդարտ կոթ։ Ցուրաքանչյուր կոթի յերկարությունը պետք է սահմանվի տեղում՝ համաձայն այն կոլտնտեսականի կամ կոլտնտեսուհու հասակի, վորը պիտի գործածի քեթմենը։ Կոթի չափը գործնականորեն վորոշվում է

հետևյալ կերպ. քեթմենի հետևի մասից դեպի վեր դրված կոթի վրա չափվում է 11 բռունցք (ձեռքի թաթը բռունցք արած) կոթի 11 բռունցքից վերև մնացած մասը պիտի կտրել։

Ընդհամենը պատվիրված է 100,000 քեթմեն, վորից՝

№ 1	տեսակի—	10,000	հատ—	10%
№ 2	«	50,000	»	50%
№ 3	«	40,000	»	40%

Հենց վոր քեթմենները տեղերը հասնեն, պիտի բաժանվեն առանց բացառության բոլոր կոլտնտեսականներին, մոտավորապես կոլտնտեսության բամբակային տարածության համապատասխան, պահպանելով վերև մատնանշված հարաբերականությունը, պիտի տալ նաև մենատնտեսներին՝ շրջգործկոմի սահմանված չափով։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՍՌ ԳԱ
Ա. Մասիսյանի անվան

ՀՀ Ազգային գրադարան
NL0291604

16388

2к О

Türkiye Devlet Kitaplıkları
Türkiyeyi Devlet Kütüphanesi

ТЕХПРОП НКЗ АССР

КЕТЬМЕНЬ—ХЛОПКОВЫМ ПОЛЯМ АЗЕРБАЙДЖАНА

АЗЕРНЕШР СЕЛЬ-ХОЗ ОТДЕЛ БАКУ—1934